

- 93 Այլ մանաւանդ զերթ դատաւոր  
Ասէր Սարգսի ոչ յանցաւոր,  
Պատասխանի տալ փաստաւոր  
Դատախազիցն իրաւախորհ:
- 94 Յայնժամ Սարգիս ժրպտեալ դիմօք  
Դատաւորին շուրջ զերեսօք  
Յածեալ զաչս իւր զարմանալեօք  
Ասէր նրմա հառաչանօք:
- 95 Միթէ՞ սղբին են առաջնորդ  
Սուրբ Յակոբայ, կամ փոխանորդ,  
Որք ընդդէմ են ինձ աղճատմամբ յորդ,  
Արդ բացեալ են բերան, կոկորդ:
- 96 Արդեօք չէ՞ յայտ քում տէրութեան  
Գողն զայսմանէ գիր վըճարման,  
Զոր ետուր ինձ կընքովդ յամն յայն,  
Յոր յանձնեցի քեզ տուրսն զայն:
- 97 Յամեալ Այոն Տեառն Յակորու՝  
Բանիւ Սարգսի ոմն ընթեռնու  
Զայն թուղթ վճարման անդ լու ի լու,  
Որով Յակոր զամօթ զգենու:
- 98 Որ եւ սրբանեալ չարախօսից  
Կրօփէր զայնքս նախատալից,  
Ի՛ր զնոյն առնէր զայլ գանկատից,  
Զի ողջն էր իսկ զըրպարտալից:
- 99 Զորս զանց առնեմ ի յիշելոյ,  
Առ ոչ եւ եւս տաղտապելոյ  
Զընթերցողըս այսրը երգոյ  
Անհամ բանիւք նոյն ժողովոյ: